

**ԸՆԴԴԵՄ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ  
ԵՐՐՈՐԴ ԳԼՈՔԱԼ ՖՈՐՈՍ  
2018թ. դեկտեմբերի 9-11  
(հայեցակարգ)**

Մարդկության առջև ծառայած լրջագույն մարտահրավերների դեմ արդյունավետ առերեսման հարցում կրթությունն առանցքային նշանակություն ունի: Այս իմաստով ցեղասպանության կանխարգելման վերաբերյալ կրթությունը կանխարգելման ջանքերի հիմնասյուներից է: 2015 թ. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի կողմից ընդունված Ցեղասպանության կանխարգելման վերաբերյալ բանաձևն ընդգծում է կրթության կարևորությունը և կոչ է անում անդամ երկրների կառավարություններին համապատասխան կրթական ծրագրերի միջոցով նպաստել ցեղասպանությունների կանխարգելման վերաբերյալ իրազեկմանը: Ցեղասպանության կրթության և հիշատակման դերը արժևորված է նաև տարածաշրջանային անվտանգության կազմակերպությունների, մասնավորապես ԵԱՀԿ կողմից, որի կառույցները կոչված են իրականացնելու մասնակից երկրների հանձնառությունները:

2018 թ. կայանալիք Ընդդեմ ցեղասպանության հանցագործության երրորդ Գլոբալ ֆորումը նվիրված է լինելու կրթության միջոցով ցեղասպանության հանցագործության կանխարգելման հիմնահարցերին: Այն կուսումնասիրի ցեղասպանության վերաբերյալ կրթությանն առնչվող առկա մարտահրավերներն ու հնարավորությունները, փորձառություններն ու հեռանկարները:

Միջոցառումը կազմակերպվել է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի՝ Ցեղասպանության կանխարգելման հարցերով Հատուկ խորհրդականի աջակցությամբ և Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիայի հետ սերտ համագործակցությամբ:

2018թ. Գլոբալ Ֆորումը կմեկնարկի դեկտեմբերի 9-ին: Այդ օրը լրանում է «Յեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի 70-ամյակը: Դեկտեմբերի 9-ը հռչակվել է «Յեղասպանության հանցագործության զոհերի հիշատակի ու արժանապատվության և այդ հանցագործության կանխարգելման» միջազգային օր՝ հիմք ընդունելով ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում Հայաստանի կողմից ներկայացված բանաձևը: Այդ բանաձևն իր հերթին հիմնվում էր ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի կողմից 2015 թվականին կոնսենսուսով ընդունված ցեղասպանության կանխարգելման վերաբերյալ բանաձևի վրա, որը ևս հեղինակել էր Հայաստանը:

Գիտաժողովը կմեկնարկի 2018 թ. դեկտեմբերի 10-ին, երբ նշվում է Մարդու իրավունքների միջազգային օրը, ինչպես նաև Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի ընդունման 70-ամյակը:

### **Օր առաջին (դեկտեմբերի 9)**

Համերգ՝ նվիրված Յեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիայի 70-ամյակին:

### **Օր երկրորդ (դեկտեմբերի 10)**

**Ֆորումի բացում: Բարձրաստիճան հասնում:**

Ֆորումը կբացվի բարձրաստիճան հյուրերի ողջույնի խոսքերով:

**Պլենար նիստ՝ նվիրված Յեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիայի և Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 70-ամյակներին (ընդունվել են համապատասխանաբար 1948 թվականի դեկտեմբերի 9-ին և 10-ին)**

Նիստի ընթացքում անդրադարձ կկատարվի Յեղասպանության կոնվենցիայի ընդունման պատմությանը, դրա դերին, ընդունումից հետո իրականացված քայլերին, արդյունքներին և քաղված դասերին:

Անդրադարձ կկատարվի նաև Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին և կընդգծվի գրեթե միաժամանակ ընդունված այս միջազգային գործիքների (Յեղասպանության կոնվենցիայի և Մարդու իրավունքների հռչակագրի) փոխլրացնող դերը՝ անհատի և խմբերի պաշտպանության գործում:

**1-ին թեմատիկ քննարկում՝ Թանգարանները և ցեղասպանությունը. ցեղասպանության զոհերի հիշատակի հավերժացումը և այդ միջոցով կանխարգելման գործընթացին նպաստումը:**

Նիստի ընթացքում կքննարկվի ցեղասպանության թանգարանների ու ինստիտուտների դերակատարումը ցեղասպանություն հանցագործության դեմ պայքարի և այդ հիմնախնդրի, լուսաբանման ու տարածման տեսանկյունից:

Հանրակրթության կարևորագույն բաղադրիչներից մեկը հանրային հիշատակումներն են, ինչն իր հերթին արտահայտվում է տարբեր ձևերով: Կքննարկվի թանգարաններ այցելությունների, հիշատակման օրերի միջոցով ցեղասպանության իրազեկվածության բարձրացման կարևորությունը, այդ ուղղությամբ ձեռնարկված տարբեր երկրների փորձի նշանակությունը, ընդհանրությունների վերհանումը:

**2-րդ թեմայիկ քննարկում՝ Ցեղասպանության և կանխարգելման վերաբերյալ կրթության ու արվեստի նոր մոտեցումներ**

Նիստի ընթացքում անդրադարձ կատարվի ցեղասպանության կանխարգելմանն ուղղված նոր կրթական և հանրակրթական ռազմավարական ծրագրերին, այդ թվում՝ սոցիալական ցանցերին և հեռակա դասավանդմանը: Մասնակիցները կքննարկեն, թե *ինչն* է կարևոր դասավանդման համար, *ու՞մ* պետք է ուղղված լինի կրթությունը և *ինչպես* կարող է կրթությունը երկարաժամկետ ազդեցություն ունենալ հասարակության վրա: Նիստի ընթացքում կքննարկվի նաև ցեղասպանության արտացոլումն արվեստի ու մշակույթի ստեղծագործություններում և դրա ազդեցությունը ցեղասպանության կանխարգելման հարցում:

**Օր երրորդ (դեկտեմբերի 11)**

**3-րդ թեմայիկ քննարկում՝ Ցեղասպանության ժխտողականության և այլապայացության քարոզչության դեմ պայքար**

Նիստում կքննարկվի, թե *ինչպես* է ցեղասպանությունների վերաբերյալ հիշողությունը դասագրքերից վերացվում, անուշադրության մատնվում կամ ժխտվում, և թե *ինչ* ռազմավարություններ է հնարավոր մշակել կրթության բնագավառում ժխտողականության դեմ պայքարելու և հասարակության վրա դրական ազդեցություն ունենալու նպատակով: Անդրադարձ կլինի առցանց միջոցներով ատելության և ժխտողականության տարածման դեմ ծրագրերի մշակմանն ու առկա փորձին:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվելու այլատյացության, ատելության և անհանդուրժողականության երևույթների դեմ պայքարի հարցում երիտասարդ սերնդի իրազեկվածությունը բարձրացնող քայլերի մշակմանը՝ դրանով իսկ նպաստելով ցեղասպան միջավայրի ձևավորման կանխարգելմանն ուղղված քայլերին:

**4-րդ թեմայիկ քննարկում՝ Կրթության և իրազեկման բարձրացման դերը ցեղասպանության հանցագործության կանխարգելման հարցում**

Նիստի ընթացքում կքննարկվեն *ինքնության* հողի վրա կատարվող հանցանքների կանխման գործում կրթության և իրազեկության բարձրացման դերը, մասնավորապես՝ մարդու իրավունքների, հանդուրժողականության, խտրականության բացառման և հիմնարար ազատությունների մասին դասավանդման միջոցով: Կներկայացվի միջազգային կազմակերպությունների, առաջին հերթին՝ ՄԱԿ-ի ցեղասպանության կանխարգելման գրասենյակի գործունեությունը ցեղասպանությունների վերաբերյալ իրազեկության բարձրացմանն ուղղությամբ: Տեսակետներ կփոխանակվեն Ցեղասպանության զոհերի հիշատակի ու արժանապատվության և այդ հանցագործության կանխարգելման ՄԱԿ-ի միջազգային օրը նշելու ազգային փորձի վերաբերյալ:

Նիստը կկենտրոնանա *դպրոցական* կրթության, *բուհական* կրթության և *տեղեկատվության տարածման թեմաների վրա*: Նիստի ընթացքում կարող են քննարկվել նաև նշված ուղղություններով միջազգային կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության կողմից կատարված աշխատանքները:

**Ամփոփիչ նիստ:**

Ֆորումի աշխատանքները կավարտվեն նախագահողի ամփոփիչ ելույթով: